## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/13

ք. Երևան «03» 12 2019թ.

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Անի Բաղդասարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Շատվոր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Շատվորյանի, որը գործում ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1293 600 (մեկ միլիոն երկու հարյուր իննսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

______________________________

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով

---

[20] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

ՀՀ, ք.Երևան, Մաշտոցի պող. 47

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011021962

00183253

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝

Անի Բաղդասարյան

---

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Շատվոր» ՍՊԸ

ք.Երևան,Պռոշյան փ. 2/1շ, բն-18

«Ինեկոբանկ» ՓԲԸ

ՀՀ 2050622067301001

ՀՎՀՀ 02634658

Տնօրեն՝ Արթուր Շատվորյան

---

/ստորագրություն/

Կ.Տ

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ֆորմատով արխիվային ֆայլերի հակավիրուսային ստուգում և բուժում, այդ թվում գաղտնաբառով պաշտպանված: Հետևյալ պրոտոկոլներով աշխատող էլեկտրոնային փոստի մուտքային և ելքային հաղորդագրությունների պաշտպանություն վնասակար ծրագրերից. IMAP, SMTP, POP3, MAPI, NNTP: Փոստային կցված ֆայլերի ֆիլտր' տրված ֆայլերի տիպը անվանափոխելու կամ հեռացնելու հնարավորությամբ: HTTP, FTP պրոտոկոլներով համակարգչի վրա բեռնվող թրաֆիկի ստուգում, այդ թվում էվրիստիկ վերլուծության միջոցով' հուսալի ռեսուրսների կարգավորման և արգելափակման ու վիճակագրության ռեժիմում աշխատելու հնարավորությամբ: Web էջերից ներբեռնվող բաներների և pop-up պատուհանների արգելափակում: Ֆիշինգային և անհուսալի կայքերի ճանաչում և արգելափակում: Ներցանցային էկրանի առկայություն, որը թույլ է տալիս ստեղծել ցանցային փաթեթների կանոններ և ցանցային կանոններ ծրագրերի համար' ցանցային սեգմենտները դասակարգելու հնարավորությամբ: Ներխուժումների հայտնաբերման և կանխարգելման համակարգի (IDS/IPS) և ցանկացած ցանցում, այդ թվում անլար, առավել հանրահայտ ծրագրերի ակտիվության ցանցային կանոնների օգտագործմամբ ցանցային գրոհներից պաշտպանություն: Ցանցային կամուրջների միջոցով կայացած ցանցային միացումների վերահսկում' մի քանի ցանցային կապերի միաժամանակյա միացման արգելափակման հնարավորությամբ: Բաղադրիչի առկայություն, որը թույլ է տալիս ստեղծել հատուկ կանոններ, որոնք արգելում կամ թույլ են տալիս ծրագրերի տեղադրում և/կամ գործարկումներ բոլորի կամ օգտվողների որոշակի խմբերի համար (Active Directory կամ լոկալ օգտագործողՆեր/խմբեր): Բաղադրիչը վերահսկում է հավելվածները ինչպես ծրագրի տեղակայման ճանապարհին, մետատվյալների, վկայականի կամ մատնահետքի և MD5 կամ SHA256 ստուգման գումարի, այնպես էլ ծրագրային ապահովման արտադրողի կողմից տրամադրված նախապես որոշված կատեգորիաներով: Բաղադրիչը աշխատում է սև կամ սպիտակ ցուցակի ռեժիմում, ինչպես նաև վիճակագրության հավաքման կամ արգելափակման ռեժիմում: Օգտվողի' արտաքին մուտքային/ելքային սարքերի հետ աշխատանքի վերահսկում, սարքի տիպի Լ7 կամ օգտագործվող կապուղու տիպին համապատասխան, ինչպես նաև հնարավորություն ստեղծելու վստահելի սարքերի ցուցակ ըստ դրանց իդենտիֆիկատորի, Active Directory համապատասխան օգտվողներին արտաքին սարքերի հետ աշխատելու համապատասխան առավելություն տալով: Իրադարձությունների մատյանում շարժական կրիչների վրա ֆայլեր գրելու և/կամ ջնջելու մասին գրանցելու գրառում անելու հնարավորություն:Օգտվողի կողմից ինտերնետի հետ աշխատելու վերահսկում, այդ թվում' որոշակի բովանդակության ռեսուրսների հասանելիության բացահայտ ցուցադրման կամ թույլտվության, արտադրողի կողմից նախկինում ստեղծված և դինամիկ թարմացվող կատեգորիաների, ինչպես նաև տեղեկատվության տեսակի (աուդիո, վիդեո և այլն): Ծրագրային ապահովումը պետք է թույլ տա մուտքագրել վերահսկողության ժամանակային ինտերվալներ պարամետրեր, ինչպես նաև հանձնարարել այն միայն կոնկրետ օգտագործողներին Active Directory - ից: BadUSB տիպի հարձակումներից պաշտպանության մեխանիզմների առկայություն: Համակարգչի վրա տեղադրված հավելվածներում խոցելիություն հայտնաբերելու համար հատուկ մոդուլի գործարկում, որը կկարողանա ստեղծել հայտնաբերված խոցելիությունների մասին հաշվետվություն: Սկավառակի ամբողջական կոդավորում հատուկ բեռնման մոդուլի ստեղծման և Single Sign On տեխնոլոգիայի աջակցությամբ: Օպերացիոն համակարգի ֆայլերի կամ բեռնման մոդուլի վնասման դեպքում կոդավորված պարունակության վերականգնման հնարավորությամբ գործիքներ: | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Պետք է գործի UEFI համակարգի հնարավորություն: Սկավառակի ամբողջական կոդավորման դեպքում երկփակոռր վավերացման հնարավորություն: Ֆայլերի կոդավորում՝ կոդավորվող բովանդակության ճկուն նշման ունակությամբ (տեղադրման տեղակայման միջոցով, ընդլայնման միջոցով, ֆայլ ստեղծող հավելվածի միջոցով): Ընտրված հավելվածների կողմից կոդավորված ֆայլերի հասանելիությունը սահմանափակելու մեխանիզմներ, ինչպես նաև տեխնոլոգիաների առկայություն, որը թույլ է տալիս ապակոդավորել ֆայլերը չպաշտպանված միջավայրում գաղտնաբառի միջոցով: Տվյալների կոդավորում շարժական կրիչների վրա, գործառնական ռեժիմը սահմանելու ունակությամբ, որը թույլ է տալիս կոդավորել և վերծանել ֆայլերը կազմակերպության ցանցից դուրս: Պաշտպանություն ծրագրային ծառայության չարտոնված հեռահար կառավարումից, ինչպես նաև ծրագրի պարամետրերի մատչման պաշտպանություն գաղտնաբառի միջոցով՝ վնասակար ծրագրերից, ներխուժումներից և արտոնություն չունեցող օգտվողներից: Առաջադրանքների թողարկում ժամանակացույցով և/կամ անմիջապես օպերացիոն համակարգի վերա թողարկումից հետո: Ֆայլային տարածության սքանավորման ընթացքում համակարգչի ռեսուրսների ճկուն կառավարում օգտվողներին հարմարավետ աշխատանքով ապահովելու համար: Սքանավորման ընթացքի արագացում՝ ի շնորհիվ այն օբյեկտների սքանավորման բացառման, որոնց դրությունը նախորդ սքանավորման համեմատ փոփոխության չի ենթարկվել: Հակավիրուսային ծրագրի ամբողջականության ստուգման հնարավորություն: Հակավիրուսային ստուգումից բացառելու հնարավորություն ըստ ֆայլի ծավալի, դոմենի/կատալոգի դիմակի կամ ֆայլի մոտ վստահելի թվային ստորագրության առկայության: Հակավիրուսային ծրագրում պաշտպանված պահուստարանի առկայություն՝ ջնջված վարակված ֆայլերի համար՝ դրանք վերականգնելու հնարավորությամբ: Պաշտպանված պահուստարանի առկայություն՝ հակավիրուսի աշխատանքի հաշվետվությունների համար: Հակավիրուսի գրաֆիկական ինտերֆեյսի միացման և անջատման հնարավորություն, ինչպես նաև նվազագույն հնարավորություններով պարզեցված գրաֆիկական ինտերֆեյսի առկայություն: Mac աշխատանքային կայանների համար հակավիրուսային ծրագրային միջոցների պահանջներ Mac աշխատանքային կայանների համար հակավիրուսային ծրագրային միջոցները պետք է գործեն macOS High Sierra 10.13, macOS Sierra 10.12, Mac OS X 10.11 (El Capitan), Mac OS X 10.10 (Yosemite), Mac OS X 10.9 (Mavericks) համակարգերով աշխատող կայանների վրա: Mac կայանների համար նախատեսված հակավիրուսային ծրագրային միջոցները պետք է ապահովեն հետևյալ գործառույթները. Ռեզիդենտ հակավիրուսային մոնիթորինգ: Ամպային պաշտպանություն նոր վտանգներից, որը ծրագրին թույլ է տալիս ռեալ ժամանակում դիմել արտադրողի ռեսուրսներին՝ գործարկվող ծրագրի կամ ֆայլի մասին տեղեկություն ստանալու համար: Հակավիրուսային բազաների ավտոմատ թարմացում ըստ ժամանակացույցի: Վարակված ֆայլերի ռեզերվային պատճենում ջնջելուց առաջ ՝ դրանց հետագա վերականգնման համար: Էվրիստիկ վերլուծության հնարավորություն, որը թույլ կտա ճանաչել և արգելափակել նախկինում անհայտ վնասաբեր ծրագրերը: Ներխուժումների հայտնաբերման և կանխարգելման համակարգի (IDS/IPS) և ցանկացած ցանցում, այդ թվում անլար, առավել հանրահայտ ծրագրերի ակտիվության ցանցային կանոնների օգտագործմամբ ցանցային գրոհներից պաշտպանություն: Ֆիշինգային և վնասակար կայքերի արգելափակում հակավիրուսի արտադրողի ամպային ծառայությունների բազաներում առկա տեղեկությունների հիման վրա: Safari, Google Chrome և Firefox բրաուզերներով | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | փոխանցվող ինֆորմացիայի պաշտպանություն (HTTP և HTTPS թրաֆիկ): Սքանավորման ընթացքի արագացում' ի շնորհիվ այն օբյեկտների սքանավորման բացառման, որոնց դրությունը նախորդ սքանավորման համեմատ փոփոխության չի ենթարկվել: Վերոնշյալ բոլոր մոդուլների կենտրոնացված ղեկավարում միասնական ղեկավարման համակարգի միջոցով, FileVault կոդավորման ղեկավարման հնարավորությամբ Linux աշխատանքային կայանների համար հակավիրուսային ծրագրային միջոցների պահանջներ<br>Linux աշխատանքային կայանների համար<br>հակավիրուսային ծրագրային միջոցները պետք է գործեն Ubuntu<br>14.04.5, 16.04.4, 17.10.1 LTS; Red Hat Enterprise Linux 6.9, 7.4; CentOS-6.9, 7.4; Debian GNU / Linux 8.10, 9.4; OracleLinux 7.4; SUSE Linux Enterprise Server 12 SP3; openSUSE 42.3 համակարգերով աշխատող կայանների վրա: Linux կայանների համար նախատեսված հակավիրուսային ծրագրային միջոցները պետք է ապահովեն հետևյալ գործառույթները. Ռեզիդենտ հակավիրուսային մոնիթորինգ: Ամպային պաշտպանություն նոր<br>վտանգներից, որը ծրագրին թույլ է տալիս ռեալ ժամանակում դի ւ1եւ<br>արտադրողի հատուկ<br>ռեսուրսներին' գործարկվող ծրագրի կամ ֆայլի մասին տեղեկություն ստանալու համար: SMB / NFS հասանելի ռեսուրսների ստուգում: Էվրիստիկ<br>վերլուծության<br>հնարավորություն, որը թույլ կտա ճանաչել և<br>արգելափակել նախկինում անհայտ վնասաբեր ծրագրերը: Օգտվողի կամ ադմինիստրատորի հրամանով հակավիրուսային սքանավորում ըստ ժամանակացույցի: zip; .7z*; ,7-z; .rar; .iso; .cab; .jar; ,bz;.bz2;.tbz;.tbz2; ,gz;.tgz; .arj. արխիվներում ֆայլերի հակավիրուսային ստուգում: Տեքստային ֆորմատով էլեկտրոնային փոստի ստուգում (Plain text): Ֆայլերի ստուգման օպտիմիզացիայի մեխանիզմի առկայություն (բացառումներ, վստահելի ընթացքներ, ստուգման ժամանակի լիմիտավորում, ստուգվող ֆայլի ծավալի լիմիտ, ստուգված և վերջին ստուգումից հետո<br>չփոփոխված ֆայլերի մասին տեղեկության<br>քեշավորում): SMB/NFS պրոտոկոլներով ցանցային մատչումով լոկալ կատալոգներում գտնվող ֆայլերի պաշտպանություն հեռուհւսր կոդավորումից: Microsoft<br>Outlook-ի<br>հավելվածների փոստային բազաների ստուգում:<br>SAMBA-ի մակարդակում ֆայլային գործընթացների ստուգման և զավթման (перехват) հնարավորություն: Օպերացիոն համակարգի ցանցային էկրանի ղեկավարում' նախնական կանոնների վերականգնման հնարավորությունով: Առաջադրանքների թողարկում ժամանակացույցով և/կամ անմիջապես օպերացիոն համակարգի վերա թողարկումից հետո: HTML և CSV ֆորմատներով հաշվետվությունների արտահանման և պահպանման հնարավորություն:<br>Բուժումից և հեռացումից առաջ վարակված օբյեկտի կրկնօրինակի ռեզերվային պահուստարանում պահպանելու հնարավորություն' ցանկության դեպքում վերականգնման հնարավորությամբ, եթե տվյալ ֆայլը պարունակում է կարևոր տեղեկություն: Առանց root իրավունքի առկայության գրաֆիկական ինտերֆեյսով ղեկավարելու հնարավորություն:Վերոնշյալ բոլոր մոդուլների կենտրոնացված ղեկավարում միասնական ղեկավարման համակարգի միջոցով<br>Windows ֆայլային սերվերների համար հակավիրուսային ծրագրային միջոցների պահանջներ Windows ֆայլային<br>սերվերների համար հակավիրուսային ծրագրային իջոցները պետք է գործեն Windows Server 2003, 2003 R2; Windows Server 2008, 2008 R2; Windows Server 2012, 2012 R2; Windows Server 2016 օպերացիոն համակարգերով աշխատող կայանների վրա: Windows ֆայլային սերվերների համար նախատեսված հակավիրուսային ծրագրային միջոցները պետք է ապահովեն հետևյալ գործառույթները.<br>Հակավիրուսային սքանավորում ինչպես ռեալ ժամանակում, այնպես էլ ըստ պահանջի տարբեր ֆունկցիաներ կատարող սերվերների վրա: Տերմինալային սերվերներ և պրինտ - սերվերներ; դոմենների կոնտրոլերների և հավելվածների սերվերներ, | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ֆայլային սերվերներ: Օգտվողի կամ ադմինիստրատորի հրամանով և<br>ժամանակացույցով հակավիրուսային սքանավորում: Առաջադրանքների թողարկում<br>ժամանակացույցով և/կամ անմիջապես օպերացիոն համակարգի վերաթողարկումից<br>հետո: Ամպային պաշտպանություն նոր վտանգներից, որը ծրագրին թույլ է տալիս ռեալ<br>ժամանակում դիմել արտադրողի հատուկ<br>կայքերին ' գործարկվող ծրագրի կամ ֆայլի մասին տեղեկություն ստանալու համար:<br>RAR, ARJ, ZIP, CAB արխիվներում ֆայլերի հակավիրուսային ստուգում,<br>այդ թվում գաղտնաբառով պաշտպանված: Ֆայլերի, ֆայլային համակարգերի<br>այլընտրանքային հոսքերի (NTFS-streams), բեռնման արտաքին սկավառակների<br>բեռնման սեկտորի<br>Պաշտպանված սերվերի վրա Microsoft Windows Script Technologies (կամ Active<br>Scripting) կողմից ստեղծված VBScript- ի և JScript սցենարների կատարման<br>փորձերի<br>շարունակական հետևում: Սկրիպտների ծրագրային կոդերի ստուգում և ավտոմատ<br>կերպով դրանցից առավել<br>վտանգավոր համարվողների արգելում: Հանրային<br>թղթապանակներին և ֆայլերին դիմումների վերլուծություն, ցանցում<br>հասանելի պաշտպանված ռեսուրսների<br>գաղտնագրման փորձերի բացահայտում: Microsoft Windows կոնտեյներների<br>ստուգման հնարավորություն: Ներխուժման<br>հայտնաբերման և կանխարգելման համակարգի (IDS / IPS) միջոցով և ցանցի<br>գործունեության կանոններով պաշտպանություն ցանցային հարձակումներից<br>ամենատարածված ծրագրերի համար, որոնք գործում են ցանկացած համակարգչային<br>ցանցում, ներառյալ անլար ցանցերը: Պաշտպանել HTTP և HTTPS տրաֆիկը<br>վիրուսներից և ֆիշինգից, ստուգելով վնասակար վեբ հասցեների<br>սերվերների վկայագրերի վավերականության ստուգման<br>հնարավորությամբ. հղում կատարելով չարակամ վեր հասցեների տվյալների<br>շտեմարաններին և վեր սերվերի վկայագրերի վավերականության ստուգման<br>ունակությանը: Թրաֆիկի զավթում (Перехват трафика) պետք է իրականացվի<br>զավթման դրայվերի (драйвера перехвата) օգնությամբ կամ իր վերահասցեավորման<br>օգնությամբ: Բաղադրիչի առկայություն, որը թույլ է տալիս ստեղծել հատուկ<br>կանոններ, որոնք արգելում կամ թույլ են տալիս ծրագրերի տեղադրում և/կամ<br>գործարկումներ բոլորի համար կամ օգտվողների որոշակի խմբերի համար (Active<br>Directory կամ լոկալ օգտագործողներ/խմբեր): Բաղադրիչը պետք է վերահսկի<br>հավելվածները, ինչպես ծրագրի տեղակայման ճանապարհին, մետատվյալների,<br>վկայականի կամ մատնահետքի և MD5 կամ SHA256 ստուգման գումարի: Բաղադրիչը<br>պետք է աշխատի սև կամ սպիտակ ցուցակի ռեժիմում, ինչպես նաև վիճակագրության<br>հավաքման կամ արգելափակման ռեժիմում: Բացի այդ, բաղադրիչը պետք է<br>կարողանա ստեղծել թարմացումների վստահելի փաթեթների ցանկ, որոնք կարող են<br>փոփոխել և գործարկել իրենց մեջ կցված ֆայլերը: Օգտվողի' արտաքին<br>մուտքային/ելքային սարքերի հետ աշխատանքի վերահսկում, ինչը հնարավորություն<br>կստեղծի կազմել վստահելի սարքերի ցուցակ և Active Directory որոշակի օգտվողներին<br>կտա արտաքին սարքերի հետ աշխատելու առավելություն: Ինտերնետի հետ<br>աշխատելու վերահսկում, ներառյալ որոշակի բովանդակությամբ<br>ռեսուրսների հասանելության հստակ արգելումը կամ թույլտվությունը, արտադրողի<br>կողմից նախկինում ստեղծված և դինամիկ թարմացվող<br>կատեգորիաներին: Ադմինիստրատորին արտաքին սարքեր<br>միացնելու մասին տեղեկացնելը: Ռիսկերի մեղմացման տեխնիկան<br>օգտագործելով գործընթացների հիշողության մեջ<br>խոցելիության շահագործման դեմ պաշտպանական մեխանիզմներ: Սքանավորման<br>ընթացքի արագացում' շնորհիվ այն օբյեկտների սքանավորման բացառման, որոնց<br>դրությունը նախորդ սքանավորման համեմատ փոփոխության չի ենթարկվել:Առանձին<br>գործընթացի միջոցով սեփականմողուլների ստուգում' դրանց<br>ամբողջականության հնարավոր խախտումը հայտնաբերելու համար: Սերվերի<br>կարևորագույն տարածքների ստուգման կարգավորում առանձին գործընթացով:<br>Սերվերային ռեսուրսների բաշխում | | | | | | | |

հակավիրուսային և այլ ծրագրերի միջև, կախված խնդիրների առաջնայնությունից.
ֆոնային հակավիրուսային սկանավորումը շարունակելու ունակություն: Կարևոր իրադարձությունների
մասին ադմինիստրատորներին տեղեկացնելու մի քանի ուղիների առկայություն (էլ. Փոստ, ձայնային ծանուցում,
բացվող պատուհան, իրադարձությունների մատյանում գրառում):
Ծառայությունների և հավելվածների պարամետրերին դերաբաշխված հասանելիություն թույլտվությունների ցուցակների օգնությամբ, ինչը թույլ է տալիս խուսափել վնասակար ծրագրերի, չարամիտ
օգտվողների կամ անվերահսկելի օգտագործողների կողմից պաշտպանության անջատումից, ինչպես նաև արգելում կամ թույլատրում է հակավիրուսի կառավարումը:
S1 £N/1
համակարգերի հետ ինտեգրացնելու հնարավորություն: Սարքավորումների և հավելվածների վերահսկման կանոնների ավտոմատ գեներացման մեխանիզմներ:
Հակավիրուսի աշխատանքային պրոցեսների քանակը
ձեռքով առաջադրելու
հնարավորություն: Գրաֆիկական ինտերֆեյսը անջատելու կարողություն: Լոկալ և հեռահար ղեկավարման պանելի
առկայություն: Հրամանների տողից հակավիրուսի
պարամետրերի ղեկավարում: Վերոնշյալ բոլոր մոդուլների
կենտրոնացված ղեկավարում միասնական ղեկավարման համակարգի միջոցով:
Օպերացիոն համակարգի ցանցային էկրանի ղեկավարում
նախնական կանոնների վերականգնման հնարավորությունով:
Առան ֆայլային սերվերների համար հակավիրուսային ծրագրային միջոցների պահանջներ
Առան ֆայլային սերվերների
համար հակավիրուսային ծրագրային միջոցները պետք է գործեն Ubuntu 16.04.4, 17.10.1, 18.04. LTS; Red Hat® Enterprise Linux® 6.9, 7.4; CentOS-6.9, 7.4; Debian GNU/Linux 8.10, 9.4; OracleLinux 7.4.; SUSE® Linux Enterprise Server 12 SP3.; openSUSE® 42.3. համակարգերով աշխատող կայանների վրա: Linux ֆայլային սերվերների համար նախատեսված հակավիրուսային ծրագրային միջոցները պետք է ապահովեն հետևյալ
գո րծա ռո ւյ թն եր ը. Ռեալ դեն ա հակավիրուսային մոնիթորինգ: Ամպային պաշտպանություն նոր
վտանգներից, որը ծրագրին թույլ է տալիս ռեալ ժամանակում դի ւ1եւ արտադրողի հատուկ
ռեսուրսներին' գործարկվող ծրագրի կամ ֆայլի մասին տեղեկություն ստանալու համար: SMB / NFS հասանելի ռեսուրսների ստուգում: էվրիստիկ վերլուծության
հնարավորություն, որը թույլ կտա ավելի արդյունավետ ճանաչել և արգելափակել նախկինում անհայտ վնասաբեր ծրագրերը: Օգտվողի կամ ադմինիստրատորի հրամանով հակավիրուսային սքանավորում ըստ ժամանակացույցի: zip; .7z*; ,7-z; .rar; .iso; .cab; .jar; ,bz;.bz2;.tbz;.tbz2; ,gz;.tgz; .arj. արխիվներում ֆայլերի հակավիրուսային ստուգում: տեքստային ֆորմատով էլեկտրոնային փոստի ստուգում (Plain text): Ֆայլերի ստուգման օպտիմիզացիայի մեխանիզմի առկայություն (բացառումներ, վտանգի ընթացքեր, ստուգման ժամանակի լիմիտավորում, ստուգվող ֆայ լի ծավալի լիմիտ, ստուգված և վերջին ստուգումից հետո չփոփոխված ֆայլերի մասին տեղեկության քեշավորում): SMB/NFS պրոտոկոլներով ցանցային միացումով լոկալ կատալոգներում գտնվող ֆայլերի պաշտպանություն հեռահար կոդավորումից: Կասկածելի և վնասված օբյեկտների տեղափոխում կարանտին:Microsoft Outlook-ի հավելվածների փոստային բազաների ստուգում: SAMBA-ի մակարդակում ֆայլային գործընթացների ստուգման և գաղթման /перехват/ հնարավորություն:
Օպերացիոն համակարգի ցանցային էկրանի ղեկավարում' նախնական կանոնների վերականգնման հնարավորությունով:Առաջադրանքների թողարկում ժամանակացույցով և/կամ անմիջապես օպերացիոն համակարգի վերա թողարկումից հետո: HTML և CSV ֆորմատներով հաշվետվությունների արտահանման և

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պահպանման հնարավորություն: Ֆայլային տարածության սքանավորման ընթացքում համակարգչի ռեսուրսների ճկուն կառավարում՝ օգտվողներին հարմարավետ աշխատանքով ապահովելու համար: Բուժումից և հեռացումից առաջ Վարակված օբյեկտի կրկնօրինակի ռեզերվային պահուստարանում պահպանելու հնարավորություն՝ ցանկության դեպքում վերականգնման հնարավորությամբ, եթե տվյալ ֆայլը պարունակում է կարևոր տեղեկություն: Առանց root իրավունքի առկայության գրաֆիկական ինտերֆեյսով ղեկավարելու հնարավորություն: Վերոնշյալ բոլոր մոդուլների կենտրոնացված ղեկավարում միասնական ղեկավարման համակարգի միջոցով:<br>Կենտրոնացված ղեկավարման, մոնիթորինգի և թարմացման ծրագրային միջոցների պահանջներ Կենտրոնացված ղեկավարման, մոնիթորինգի և թարմացման ծրագրային միջոցները պետք է գործեն Microsoft Windows 7; Microsoft Windows 8; Microsoft Windows 8.1; Microsoft Windows 10; Windows Server 2008, 2008 R2; Windows Server 2012, 2012 R2; Windows Server 2016 համակարգերով աշխատող կայանների վրա: Կենտրոնացված ղեկավարման, մոնիթորինգի և թարմացման ծրագրային միջոցները պետք է գործեն տվյալների բազաների կառավարման համակարգի Microsoft SQL և MySQL տարբերակների հետ: Կենտրոնացված ղեկավարման, մոնիթորինգի և թարմացման ծրագրային միջոցները պետք է ապահովեն հետևյալ գործառույթները. Միասնական դիստրիբուտիվից հակավիրուսային պաշտպանության կառավարման համակարգի տեղադրում: Պաշտպանվող հանգույցների քանակից կախված տեղադրման ընտրություն: Active Directory-ից տեղեկության կարդացման<br>հնարավորություն՝ կազմակերպության համակարգիչների գրանցումների և օգտվողների մասին տվյալներ ստանալու նպատակով: Ցանցում IP հասցեի, հոսթի անվանման, դոմենի անվանման, ենթացանցի դիմակի միջոցով համակարգիչների փնտրման և հայտնաբերման հնարավորություն: Ցանցում նոր համակարգիչների հայտնվելու դեպքում դրանց գրանցումները ըստ ղեկավարման խմբերի ավտոմատ: Հակավիրուսային պաշտպանության ծրագրային միջոցների կենտրոնացված տեղադրում, թարմացում և հեռացում: Կենտրոնացված կարգաբերում, ղեկավարում, հաշվետվությունների և դրանց մասին վիճակագրության դիտում: Ղեկավարման կենտրոնի միջոցով անհամատեղելի հավելվածների կենտրոնացված հեռացում (ձեռքով և ավտոմատ կերպով):<br>Քաղաքականությունների և խնդիրների փոփոխությունների պատմության պահպանություն, նախորդ տարբերակներին վերադառնալու հնարավորություն: Հակավիրուսային ագենտների տարատեսակ տեղադրման մեթոդների առկայություն. Հեռահար տեղադրման համար - RPC, GPO, ղեկավարման համակարգի միջոցով, լոկալ տեղադրման համար - տեղադրման ինքնուրույն փաթեթի ստեղծման հնարավորություն: Անվտանգության կանոններում հատուկ թրիգերների նշման հնարավորություն, որոնք վերաբաշխում են հակավիրուսային ծրագրի կարգավորումները ըստ օգտատերերի, որից օգտագործողը մուտք է գործել, ընթացիկ IP հասցեի, ինչպես նաև կախված այն հանգամանքից , թե որ OUձԸ-ում է գտնվում համակարգիչը կամ որ անվտանգության խմբում է<br>հնարավորություն նման թրիգգերների խմբավորման<br>Օգտվողների համակարգչի օպերացիոն համակարգում և դրանում տեղադրված ծրագրերում խոցելիությունների ավտոմատ փնտրում և վերացում: Նախքան հաճախորդների համակարգիչների մեջ ներբեռնված թարմացումների տարածումը՝ դրանց թեստավորումը կենտրոնացված կառավարման ծրագրային ապահովումների միջոցով, թարմացումների տրամադրում օգտվողի աշխատատեղեր անմիջապես դրանց ստացումից հետո: Ցանցում վիրտուալ մեքենաների ճանաչում և դրանց միջև ծանրաբեռնվածության բաշխում այն դեպքում, երբ դրանք գտնվում են նույն ֆիզիկական սերվերի վրա: Ադմինիստրատորների և օպերատորների դերերի կարգավորման հնարավորությամբ բազմամակարդակ համակարգի ստեղծում, ինչպես նաև հաշվետվությունների տրամադրում յուրաքանչյուր մակարդակում: Կենտրոնացված ղեկավարման համակարգի օգուխների նախակարգաբերված դերերի առկայություն: Օգտվողների գրանցումներին կապելու նպատակով պետք է իրականացվի կոնկրետ նշված իրավասություններով դերերի խմբերի ստեղծում: | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կամայական մակարդակի ադմինիստրավորման սերվերների հիերարխիայի ստեղծում և վերին մակարդակից դրանց կենտրոնացված ղեկավարման հնարավորություն: Ղեկավարման սերվերների համար multi-tenancy աջակցություն: Ծրագրային միջոցների և հակավիրուսային բազաների թարմացման հնարավորություն տարատեսակ աղբյուրներից, ինչպես կապուղիներով, այնպես էլ մեքենայական կրիչներից: Կառավարման սերվերի միջոցով հակավիրուսային ԾԱ արտադրողի ամպային սերվերների մատչում: Արտոնագրերի ավտոմատ տարածում օգտվողների համակարգիչների վրա: Տեղակայված ծրագրային ապահովման և սարքավորումների գույքագրում օգտվողների համակարգիչների վրա: Կառավարման կոնսոլից RDP-ի կամ կանոնավոր այլ միջոցով կապվելու հնարավորություն: Օգտագործողը պետք է հուշվի, թույլատրել հեռակա կապը: Օգտագործողին պետք է հարցում գա, հեռակա միացման վերաբերյալ: ՕՀ փաթեթի հետ աշխատելու գործիքակազմի առկայություն. ՕՀ փաթեթի ստեղծում ֆիզիկական կամ վիրտուալ մեքենայի հիմքի վրա, փաթեթի տեղադրում ադմինիստրատորի կողմից ընտրված<br>համակարգիչների վրա, այդ թվում դատարկ համակարգչի (bare metal). Պետք է հնարավորություն լինի ստեղծված փաթեթում դրայվերների ցանկ ներառելու համար: 0< տեղադրումից հետո սկրիպտների գործարկման կամ լրացուցիչ ԾԱ ավտոմատ տեղադրման հնարավորություն: Նախնական տեղադրման ծրագրակազմից ՕՀ փաթեթի ներմուծման հնարավորություն (WIM): Չներառված ԾԱ արտոնագրերի վերահսկման ավտոմատ համակարգի առկայություն, ադմինիստրատորին արտոնագրի<br>օգտագործման կանոնների խախտման կամ գործողության ժամկետի ավարտի մասին տեղեկացման հնարավորությամբ: Չներառված հավելվածների (Adobe Reader, Mozilla Firefox, 7-zip և այլ) համար տեղադրման փաթեթների ավտոմատ ստեղծում և ավտոմատ կենտրոնացված տեղադրում<br>համակարգիչների վրա: Exchange ActiveSync սերվերի միջոցով բջջային սարքերի ղեկավարման գործառույթ: iOS MDM սերվերի միջոցով բջջային սարքերի ղեկավարման գործառույթ:<br>Պլանավորված/ տրված գործառույթների մասին SMS հաղորդագրությունների ուղարկման հնարավորություն: Կառավարվող բջային սարքավորումների վրա հավելվածների կենտրոնացված տեղադրում: Կառավարվող բջային սարքավորումների վրա արտոնագրերի կենտրոնացված տեղադրում: Տվյալների կոդավորման գործառույթի ղեկավարման աջակցություն ունակություն: Ղեկավարման համակարգի և ցանցի ծանրաբեռնվածությունը կանխելու համար կազմակերպության ցանկացած համակարգիչ որպես թարմացումների տարածման աղբյուր գրանցելու հնարավորություն: Ղեկավարման համակարգի ծանրաբեռնվածությունը կանխելու համար կազմակերպության ցանկացած համակարգիչ որպես հակավիրուսային ագենտներին վերաբերվող իրադարձությունների վերահասցեավորման կենտրոն' ընտրված օգտատերերի համար, կառավարման կենտրոնացված համակարգին ուղարկելու աղբյուր գրանցելու հնարավորություն: Հակավիրուսային պաշտպանության, լիցենզավորման, ինչպես նաև գույքագրման մասին գրաֆիկական հաշվետվությունների կազմում: Համակարգի աշխատանքի վերաբերյալ նախապես կարգաբերված առանդարտ հաշվետվությունների առկայություն: Հաշվետվությունների արտահանում PDF և XML ֆորմատներով: Ռեզերվային պահուստարանների և կարանտինների օբյեկտների կենտրոնացված ղեկավարում ցանցի ամբողջ ռեսուրսներում, որոնց վրա տեղադրված է հակավիրուսային ԾԱ: Կառավարման սերվերում նույնականացման համար ներքին հաշիվների ստեղծում: Առկա է կառավարման համակարգում ներկառուցված միջոցներով կառավարման համակարգի ռեզերվային պատճենում: Windows Failover Clustering աջակցում: Windows Certificate Authority ծառայության հետ ինտեգրացիայի աջակցում: Հավելվածը կառավարելու web կոնսոլի առկայություն: Օգտվողների ինքնասպասարկման պորտալի առկայություն: Ինքնասպասարկման պորտալը ապահովում է օգտվողների միացումը հետևյալ նպատակներով. Բջջային սարքավորման վրա ղեկավարման մոդուլի տեղադրում, բջջային սարքավորումների դիտում, արգելափակման հրամանի ուղարկում, սարքավորման որոնում և բջջային | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | սարքավորումներից տվյալների հեռացում: առկա է վիրուսային համաճարակների ծագման վերահսկողության համակարգ: | | | | | | | |

*ի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և անությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա րի 20-ը:*

*ջնիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի կամ մատակարարված ապրանքի թերություններ, ապա պայմանագրի կողմը պարտավոր է իր հաշվին՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:*

**ԳՆՈՐԴ**
ՀՀ պետական վերահսկողական
ծառայություն
ՀՀ, ք.Երևան, Մաշտոցի պող. 47
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011021962
00183253

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար
Անի Բաղդասարյան

ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Շատվոր» ՍՊԸ
Ք.Երևան,Պռոշյան փ. 2/1շ, բն-18
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050622067301001
ՀՎՀՀ 02634658

Տնօրեն՝ Մհերուր Շատվորյան

ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 2*
*« 03 » 12  2019թ. կնքված*
*"ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/13» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 48761100/4 | Հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ | | | | | | | | | | | | 1293600 | 1293600 |

ԳՆՈՐԴ
Հ պետական վերահսկողական ծառայություն
ՀՀ, ք.Երևան, Մաշտոցի պող. 47
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011021962
00183253
վոր քարտուղարի
ռնակատար`

Անի Բաղդասարյան
/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ
«Շատվոր» ՍՊԸ
ք.Երևան, Պռոշյան փ, 2/1շ, բն-18
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050622673010001
ՀՎՀՀ 02634658
Տնօրեն Արթուր Շատվորյան

/ստորագրություն/
Կ.Տ

*«        »          20 թ. կնքված*
*"ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/13» ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը _______________
հհ ___________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
ՀՀ, ք.Երևան, Մաշտոցի պող. 47
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011021962
ՀՎՀՀ 00183253

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    »«          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    »    «                    » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«    »    20 թ. կնքված*
*"ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/13» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N_______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ________________________
Գնորդի անվանումը    Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը    պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. __________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________________
ազգանուն, անուն

____________________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________________
ազգանուն, անուն

____________________________
ստորագրություն